

Պայմանագրի շնորհման վերաբերյալ տեղեկատվություն

Շինարարական աշխատանքներ

Ծրագրի անվանում՝ **Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր, Տրանշ 2**

Պայմանագրի նկարագրություն՝ **L3293-ICB/CW-T4: Երևանի արևմտյան շրջանցող ճանապարհի ճանապարհային հանգույցների կառուցում: Դավթաշեն-Աշտարակ ճանապարհահատված**

Հաղթող ճանաչված կապալառու՝ **Համատեղ ձեռնարկություն "Քոմփանի Բլեք Սի Գրուպ" ՍՊԸ (Վրաստան) ու "Վահագն և Սամվել" ՍՊԸ (Հայաստան)**

Պայմանագրի արժեք՝ **14,955,555.55 ԱՄՆ դոլար**

Պայմանագրի շրջանակներ՝ **Աշխատանքները ներառում են.**

- 2.4 կմ հիմնական ճանապարհի կառուցում,
- Երկու տրանսպորտային հանգույցի կառուցում (Չաուշ փ.-Աշտարակի խճուղի և Հալաբյան փ.-Եղվարդի խճ. հանգույցներում),
- Հաղորդուղիների տեղադրում/տեղափոխում (խմելու և ոռոգման ջրի, կոյուղու, գազի, հոսանքի մատակարարման և արտաքին լուսավորության):
- Արտաքին լուսավորության համակարգերում նախատեսվում է տեղադրել LED տիպի լուսատուներ:

Տևողությունը՝ **18 (տասնութ) ամիս**

Պայմանագրի ստորագրման օր՝ **20 դեկտեմբեր, 2016**

Ընկերության անվանումը	Ընթերցված գումարը ԱՄՆ դոլար	Վերջնական գնահատված գումարը ԱՄՆ դոլար	Վերջնական դասակարգվածություն
"Քոմփանի Բլեք Սի Գրուպ" ՍՊԸ և "Վահագն և Սամվել" ՍՊԸ (Վրաստան/Հայաստան) ՀՁ	14,955,555.55	14,955,555.55	1
Սահակյանշիին ՓԲԸ և Կաուկասոս Ռոդ Պրոջեկտ (Հայաստան/Վրաստան) ՀՁ	15,044,588.44	15,044,221.82	_*
Չայնա Ռոդ ընդ Բրիջ Քորփորեյշն (Չինաստան)	15,472,199.69	15,477,438.88	2
ՍԱԴԵ (Ֆրանսիա)	16,060,836.79	16,060,836.79	_**
Սուարդի ՓԲԸ և Խաչիար ՓԲԸ (Իտալիա/Հայաստան) ՀՁ	16,600,000.71	16,600,000.85	_***

Իտալիանա Կոստրուցիոնի (Իտալիա)	18,546,810.46	16,900,479.86	_****
Ռիզանի դէ Էչեր գրուփ (Իտալիա)	22,209,914.75	22,209,914.75	3
Սինտիդորո Քորփորեյշն Լիմիթեդ (Չինաստան)	23,922,490.00	23,954,380.15	4

* Սահակյանշին ՓԲԸ-ի նմանատիպ աշխատանքների փորձը չի անցել նվազագույն գումարային պահանջների շեմը և հաշվի չի առնվել, իսկ ուսումնասիրության արդյունքում ներկայացված տեղեկատվությունից պարզ դարձավ, որ Կառուկասուս Ռոդ Պրոջեկտ-ի կատարած աշխատանքները չեն համապատասխանում պահանջված աշխատանքների բնույթին՝ բարդության, մեթոդների, տեխնոլոգիաների և այլ բնութագրերի առումով, ինչպես նկարագրված է մրցութային փաստաթղթերի Բաժին 6-ում (պատվիրատուի պահանջներ):

** Հայտատուն չունի բավարար ֆինանսական ռեսուրսներ մրցութային փաստաթղթերի պահանջների համաձայն:

Հայտատուի ներկայացված փորձը չի համապատասխանում ֆիզիկական չափի, բարդության, մեթոդների, տեխնոլոգիաների կամ այլ բնութագրերի առումով, ինչպես նկարագրված է մրցութային փաթեթի Բաժին 6-ում (պատվիրատուի պահանջներ):

Հայտատուն չի տրամադրել տեղեկատվություն վերջին 5 տարիների ընթացքում մեկ օրում առնվազն 15,000 տրանսպորտային միջոցների երթևեկության հաշվարկի փորձի առկայության վերաբերյալ: Հայտատուն չի տրամադրել վերջին 5 տարիների ընթացքում առնվազն 30.000 մ2 գոյություն ունեցող քաղաքային ասֆալտի կառուցման վերաբերյալ տեղեկատվություն՝ որևէ ծրագրի շրջանակում: Հայտատուն նշել է, որ Կամուրջշին ՓԲԸ-ն ունի 24մ երկարությամբ մոնոլիտ երկաթբետոնից էստակադայի կառուցման փորձ, որը չի համապատասխանում մրցութային փաստաթղթերի պահանջներին:

*** ՀՀ համաձայնագիրը ստորագրված էր միակողմ` մեկ գործընկեր Խաչիար ՓԲԸ-ի կողմից: Իսկ Սուարդի ՓԲԸ-ի լիազորված անձի ստորագրությունը բացակայում էր: Ուստի ՀՀ համաձայնագիրը չի համապատասխանում մրցութային փաստաթղթերի ITB 4.1 և 20.2 պահանջներին. դրանով իսկ հայտը մերժվել է:

**** Հայտատուն նշել էր, որ ունի նմանատիպ աշխատանքների փորձ, սակայն որն ավարտված է ընդհամենը 80.46%-ով: Հետևաբար՝ դա համարվում է ոչ էապես փաստացի ավարտված աշխատանք, և դրանով իսկ հայտատուն չի համապատասխանել մրցութային փաստաթղթերի պահանջներին: